ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» մայիսի 2026 թվականի N: 175 - Ա ք. Գյումրի

ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին կետի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2003 թվականի մարտի 11-ի թիվ 192 որոշմամբ հաստատված «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 26-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արթուր Վարդանյանի 2026 թվականի մայիսի 13-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ Ե Մ՝

1. «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Վարդանյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդից մնացած մասը՝ 12 աշխատանքային օր՝ 2026 թվականի մայիսի 22-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ:

2. Արթուր Վարդանյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունները վերապահել նույն կազմակերպության հրահանգիչ-մեթոդիստ Արտյոմ Գալոյանին:

Ա.ԱՅՎԱԶՅԱՆ
փոխարինող

Ինչպես նաև ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԱԿՐՁԱՆԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ

Իսկականի հետ ճիշտ է